

Նոյն մաշուած, աններդաշնակ, անհոգի լարն է որ կը հսչեցնէ:  
Մտիկ ըրէք հիմայ իր «Կեանքի նպատակը».

Ես պիտի ձգտեմ կեանքիս ընթացքում—

Դէպի մնայուն, յաւիտենականն...

Հաճոյք ու գգուանք, սիրոյ հեշտութիւն—

Տեռում է միայն ուղիղ մի վայրկիան:

Կ'ուղէք ապացոյց բանաստեղծի «դէպի մնայուն, յաւիտենականն» ձգտումին—բանաստեղծութիւններու հատորը:

Եթէ պ. Թաւարրէգեանը աճապարած չըլլար և իր մտածումը հասունցնելէ, իր լեզուն, ոճը, բացատրութիւնները յղկելէ, ճոխացնելէ, դաշնակաւորելէ յետոյ միայն հրապարակ իջնէր, գուցէ յաջողէր մեղի տալ ըիչ ու շատ աջող երգեր. Օրինակ, հետեւալ ոտանաւորին մէջ, հակառակ իր անստանելի ձերն և արուեստի աջը ծակող թերութիւններուն՝ կայ յղացումի ինքը՝ նատպութիւն.

Ինչպէս մոգերն արևելքում

Տեսան աստղ մի նորածին

Ու նորանով անշուք այրում

Գտան մանուկ Յիսուսին,

Այդպէս էլ ես, երբոր տեսայ

Չնաշխարհիկ քո աչեր,

Իսկոյն, սիրելիս, հասկացայ,

Որ դու պիտ լինես իմ սէր...

Պ. Թաւարրէգեանի բանաստեղծութիւններու ընթերցումով այն ընդհանուր տպաւորութիւնը կ'ունենանք թէ հեղինակը տակաւին շատ անփորձ, անպատճաստ և տաղաչափութեան արուեստին բոլորվին անծանօթ է: Երևակայեցէք ինչ աստիճան միամիտ է, որ չէ վարանած այս տեսակնախադասութիւն մը զետեղելու «Նկատուած վրիպակներ»-ու տակ.

«Իսկ եթէ պատահեն այլ սխալներ՝ խնդրում եմ ընթերցողները ուղղենա:

### ԶԱԻՆ

Հ. Համբարձումեան «Անհունի Էջերում»: Ս.-Պետերբուրգ, 1904, գինն է 60 կող.:

Պ. Հ. Համբարձումեանը հրատարակել է ոտանաւորների մի բաւական ստուար ժողովածու՝ բաղկացած 134 երեսից, «Անհունի էջերում» տարօրինակ վերնագրով: Անհունի էջեր... արդիօք ինչ է նշանակում դա մարդկային սովորական լեզուով

—անշուշտ միայն ինքը հեղինակը կը հասկանայ իր գրքոյկի վերնագիրը և ոչ մեզ նման հասարակ մահկանացուները, որոնք հնպարտ չեն անհուն» պ. Համբարձումեանի նման և որոնց համար չէ գրուած ըստերևոյթին զրբոյկը: Սակայն մեզ թւում է, որ ինքը պ. Համբարձումեանն էլ չէ կարող պարզ բացատրել այդ մշուշապատ, եթէ չասենք անմիտ վերնագիրը: Կան մի քանի դժբախտ բառեր հայոց լեզուի մէջ, որոնց կարծես վիճակուած է անվերջ նահատակուել, և «անհուն»-ը այդ բառերից մէկն է: Ամենայն համբարձակութեամբ և առանց խղճահարուելու նա կոխում է այդ բազմաչարչար խօսքը ամեն տեղ, ուր և պատահի, —«անհունի էջերը», «ես հպարտ եմ անհուն», «անհունի ափերից», «անհուն է առագաստը հոգուս», «կարօտել է անհուն շշոյում է անհուն», «փոքրութեամբ անհուն», «ես անհուն եմ կրքով», «անհունից էլ աւել ես հպարտ եմ»... և այս բոլորը, բացի վերնագրից, մի ոտանաւորում միայն... Արդեօք սա նըշան չէ, որ պ. Համբարձումեանը անհուն (իր նման ասենք) յանցանք է գործում այն լեզուի դէմ, որով գրում է:

Սակայն վերնագրի անաջող ընտրութիւնը և «անհուն» ու այլ բազմաթիւ բառերի անտեղի գործածութիւնը գուցէ կարելի լինէր և ներել հեղինակին, եթէ նրա ոտանաւորներն աւելի շնորհալի ու հասկանալի լինէին և աւելի միտք պարունակէին իրանց մէջ, քան վերնագիրը: Դիբախտաբար այդ էլ այդպէս չէ: —Բառեր, բառեր, անթիւ, անհամար, անկապ, կուտակուած իրար վրայ, բարձրացած իրար թիկունք, խառնուած շինողուած իրար հետ, և սակայն քիչ շատ քիչ միկրոսկոպիական չափով միտք —ահա պ. Համբարձումեանի ոտանաւորները, մինչդեռ լաւ ոտանաւորի մէջ քիչ խօսում են և շատ բան ասում: Ահա մի նմուշ պ. Համբարձումեանի բառերի տարափից.

#### Կ Ա Ց Ծ Ա Կ Ն Ե Ր (Երես 12)

Սեւաթոյր, խտացած,  
Վշտածոր — վշտածին,  
Կնծոռոտ — կսկծոտ,  
Մշտալուռ ամսիրի  
Ցաւ-արիւն կամարում  
Շանթահար-զալարուող,  
Հրաբուղիս — բոցավառ,  
Լեղուածեւ — պսպղուն,  
Ու երկին ու եթեր,

Ու տարերքը ճեզրող,  
 Ողեշունչ—կատաղի  
 Կրակէ կայծակներ,—  
 Որ իբրեւ բնութեան,  
 Ճշմարտի զօրաւոր  
 Վեհապանծ—փառանեղ,  
 Անսահման—անսասան  
 Վսեմ-լոյս—յաղթանակ,—  
 Եւ իբրեւ փառաւոր,  
 Մտքից-վեր, ոյժից-վեր  
 Անսահման—անկուպար  
 Գեղեցկի յողթութիւն,—  
 Ոգու-պէս, նոգու-պէս  
 Ճախրելով մեզսաւոր  
 Սին-ունայն աշխարհի  
 Դժնաշունչ երեսին,—  
 Տապալում էք, այրում  
 Ժէռ ու քար, չար-խաւար,  
 Ու կեանքնը, ու սրտնը...  
 Դալարուէք, բռնկուէք  
 Անապատ ու դժոխք  
 Կրծքիս տակ, նոգուս մէջ...  
 Ու զարնէք, ու վշրէք,  
 Ու անհետ կործանէք  
 Վշտի ժայռը սրտիս...

**Սա բանաստեղծութիւն չէ, պ. Համբարձումեան, այլ շատախօսութիւն:**

Սակայն այս կծու ճշմարտութիւնն ասելով հեղինակին՝  
 մենք ամեննեին միտք չունենք վհատեցնելու նրան, ոչ.—նրա  
 գրքոյկի մէջ կան մի քանի ոտանաւորներ,—և իսկապէս քըն-  
 նում ենք գրքոյկը այդ մի քանի ոտանաւորների պատճառով—  
 որոնք ցոյց են տալիս, թէ մի օր, երբ պ. Համբարձումեա-  
 նը կը հասունանայ աւելի, քան այժմ, այն ժամանակ գուցէ.  
 Կը կարողանայ կարդալու արժանի ոտանաւորներ գրել.—պ.  
 Համբարձումեանի մէջ կայ մի փոքրիկ կայծ, մի փոքրիկ շը-  
 նորնք, և այդ երեսում է այն հազուազիւս ըոպէներում, երբ նա  
 չէ փաթաթւում նիցշէկանութեան կեղծ քղամիդով, չէ համա-  
 րում իրան «անյաղթ, անհուն, անհունից էլ վեր», չէ ցնդա-  
 բանոյմ կայծակի, շանթի և որոտի յասին, այլ բաց թողած  
 անհունի փէշերը՝ իջնում է վայր-երկիր, խօսում է իր սրտին  
 մօտ ցաւերի մասին, խօսում է ամենքին հասկանալի լեզուով,

ինչպէս օրինակ՝ հետևեալ ոտանաւորի մէջ, որ մեր կարծիքով,  
փոքրիշատէ աջողուածներից մէկն է.

## ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Ինձնից երգ ես ուզում, երդ խնդուն, վառվուռն,  
Քայց ես ինը երգեմ քեզ համար...  
Ես ծնուած եմ հեռու, ու անմէր, ու անտուն,  
Սուկ մրուր եմ ըմպել անդադար...

Կրծքիս տակ ես սնել իմ ըղձեր ու տենչանք,  
Իսկ ձեռիս ունեցել թուզութիւն...  
Ինձ օտար է եղել աշխարհի միշտ բերկրանք,  
Ինձ նեղել է յաճախ գերութիւն...

Եւ ամեն մի հնյիւն լարերիս տիրամած  
Միշտ անձուկ ու վշտո՞տ է երգում...  
Ա՛խ, եղայր, տես, չըս կողմն է դաժան, մուայլուած,  
Ողջ աշխարհն է ողբում ու սղում...

Տես, պայմում է որոտ, որոտի յետեւից,  
Եւ որքան են մօշնում ծաղիկնե՞ր...  
Օ՛, որքա՞ն վաս յօսեր ու տենչանք բերկրալց  
Սին-խոնաւ գերեզման են մտել...

Ի՞նչ երգեմ ես խնդուն, քնարով իմ տիսուր,  
Երբ որ վիշտն է հսկայ, եւ անհուն են ցաւեր...  
Ի՞նչ երգեմ ես ուրախ, երբ աշխարհը հանուր  
Այլքան պարզ է սղում օր-գիշեր...

Դժբախտաբար այսպիսի ոտանաւորներ միայն մի քանի հատ կան «Անհունի էջերում»-ում, իսկ միւսները պատանեկական-երիտասարդական զառանցացներ են, կեղծ, հում, անմարս, տենդային, հիւանդու և, որ ամենից աւելի վատն է, չափազանց ինքնապաշտ ու յաւակնոտ...

Մեր կարծիքով պ. Համբարձումեանը սխալուել է՝ շտապելով տպագրել իր ոտանաւորների ժողովածուն։ Մի-երկու տարուց յետոյ, երբ նա նորից կը թերթէր իր ոտանաւորները, հաւատացած ենք, կը համոզուէր, որ նրանց ահագին մեծամասնութիւնը տպագրելու բաներ չեն. երկրորդ և աւելի մեծ սխալը գործել է հեղինակը՝ կցելով գրքոյկին մի վերջաբան,

որ ամբողջովին ինքնագովութիւն է և... հայհոյանք գրախօսների դէմ. յամենայն դէպս այդ վերջաբանը մի վերին աստիճանի անվայել և անպատկառ գրութիւն է, որ պատիւ չէ կարող բերել աւելի ևս պ. Համբարձումեանի նման «Անհունի էջերում» սաւառնող մի «բանաստեղծի» ...

Ա. Մ.

Օմար Խայեամի «Բառեակները», քննական ուսումնասիրութեամբ մը. պարսկերէն բնագրէն թարգմանեց Գ. Փառնակ. Փարիզ, 1904.

Պարսկական գրականութիւնը բոլոր միւսիւլման ազգաց մէջ եղել է և մնում է ամենաբեղմնաւորը. եթէ կայ մի գրականութիւն, որ նոյն բարձրութեան վրայ կանգնած լինէր, գակասիկական արարականն է անշուշտ. սակայն և այս գրականութեան մեծ ներկայացուցիչները եղել են պարսկական ծագումից: Պարսիկը իր մտաւոր արտադրութիւններով մի պատկառելի բարձրութեան վրայ է գտնուում համեմատած իր գըրացի արիթական կամ մոնգոլական ծագում ունեցող ազգերի հետ. թէև շատ անգամ քաղաքականապէս հնթարկուել է նրանց ազգեցութեան, բայց մտաւորապէս միշտ տիրապետող տարը է հանդիսացել արևելքում: Նա մշակել է գիտութիւնները, պատմագրութիւնը, իսկ բելլետրիստիկան, մասնաւորապէս բանաստեղծութիւնը հասցըել է մի որոշ կատարելութեան. այս վերջինիս մէջ, ինչպէս հայելիում, արտացոլանում է պարսկի ճըկուն, դիւրաթեք, սրամիտ հոգին, նուրբ ըմբռնողութիւնը և կայտառ երևակայութիւնը: Եւ այս բանաստեղծութիւնը իբրև մի անսպառ աղբիւր դարերից 'ի վեր սնունդ է մատակարարել այլազան միւսիւլման ազգերին սկսած ինդուսից մինչև Վոսփորի ափերը, և պարսկերէն քաղցրահնչիւն մուզիկալ լեզուն դարձել էր Աստաջաւոր Ասիայում այն, ինչ որ էր Եւրոպայում ֆրանսերէն լեզուն XVIII դարում:

Բազմաթիւ են պարսկի բանաստեղծները. ամեն շահ, աւմեն աւատական իշխան, մինչև անգամ և հարուստ կալուածատէր իրան պարտք և պատիւ էր համարում բանաստեղծների մեկնասը դառնալու: Ղազնէվի հարստութեան ամենամեծ ներկայացուցչի՝ Սուլթան-Մահմուդի պալատում հովանի և ապաստան էին գտել չորս հարիւր բանաստեղծ: Բայց այս բանաստեղծների շատերի երկերը դարերի ընթացքում անհոգութեան կամ մոլեռանդ տղիտութեան զոհ դարձան, ուրիշները մնում են դեռ, բայց ձեռագիրների մէջ և թագնուած զանազան անկիւններում: Իսկ այն, ինչ որ հրատարակուել է արևմուտքում կամ